ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

09.08.2019թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 95-99 հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2019 թվականի հունվարի 30-ի N 32-Ա որոշումը՝

ՀՀ Լոռու մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ Ալիկ Սահակյանի (հանձնաժողովի նախագահ), ՀԳՄՏՍ գործունեության համակարգման բաժնի պետ Վարդան Հովհաննիսյանի, ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Նունիկ Ասրյանի, ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ Մուշեղ Գրիգորյանի, հողաշինության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետ Էդգար Հախվերդյանի, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի առաջին կարգի մասնագետ Անի Ղազարյանի, քաղաքաշինության վարչության առաջատար մասնագետ՝ Արման Մխիթարյանի, համայնքների գլխավոր հատակագծերի և գոտիավորման սխեմաների նախագծերի կազմման աշխատանքների համակարգող Գագիկ Հախինյանի, զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Սպարտակ Ղուբաթյանի, բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Սամվել Խառատյանի, սոցիալական ապահովության բաժնի առաջատար մասնագետ Վաղարշակ Եղիազարյանի և զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի առաջատար մասնագետ Ժիրայր Բասմաջյանի կողմից իրականացվեց իրավական և մասնագիտական հսկողություն ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքում՝ ՏԻՄ-երի լիազորությունների, հողօգտագործման, ՔԿԱԳ, կապի և առողջապահության, քաղաքաշինության, պաշտպանության, ԱԻ և ՔՊ, բնության և շրջակա միջավայրի պահպանության, ընդերքօգտագործման, առևտրի և ծառայությունների, սոցիալական պաշտպանության և կրթության ոլորտներում, ինչպես նաև համայնքային ենթակայության 1 նախադպրոցական ուսումնական հաստատությունում:

1. Իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածով ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:
2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:
3. Նշումներ /համայնքի ղեկավարի առարկությունները իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների և իրավական և մասնագիտական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/

---

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Լոռու մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Լոռի Բերդ համայնքի ղեկավարին:

Ալիկ Սահակյան _____

Վարդան Հովհաննիսյան _____

Նունիկ Ասրյան _____

Մուշեղ Գրիգորյան _____

Էդգար Հախվերդյան _____

Գագիկ Հախինյան _____

Անի Ղազարյան _____

Արման Մխիթարյան _____

Սպարտակ Ղուբաթյան _____

Սամվել Խառատյան _____

Վաղարշակ Եղիազարյան _____

Անահիտ Բարոյան _____

Ժիրայր Բասմաջյան _____

Համայնքի ղեկավար՝
Արայիկ Ներսիսյան _____